

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՔԱՂԱՔԱՅԻ ԱՇԽԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱԶԳԱՅԻՆ  
ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀՀ  
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 5 ՀՈԴՎԱԾԻ ԵՎ  
2004 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱ-  
ԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 115 ՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-  
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

5 փետրվարի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ռ. Դանիելյանի,  
Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Ռ. Նազարյանի, Ռ. Պապյանի,  
Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող քաղ. Ա. Հարությունյանի ներկայացուցիչ Ռ. Ալումյանի,  
գործով որպես պարասիստող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշ-  
տոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական Դ. Մելքոն-  
յանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ  
կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Աշուր  
Հարությունյանի դիմումի հիման վրա՝ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի  
հունիսի 13-ին ընդունված՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփո-  
խություններ եւ լրացումներ կարարելու մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի եւ 2004  
թվականի դեկտեմբերի 24-ին ընդունված՝ «ՀՀ քրեական դատավարողական օրենսգրքի 115  
հոդվածի դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը  
որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղ. Ա. Նարությունյանի՝ սահմանադրական դատարանում 03.07.2007թ. մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի հաղորդումը, դիմող եւ պարասխանող կողմերի գրավոր բացարրությունները, հետազոտելով վեճի առարկա օրենքները եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ 3.**

**1. «ՀՀ քրեակադարձական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի դեկտեմբերի 24-ին, ՀՀ Նախագահի կողմից սպորագրվել՝ 2005 թվականի հունվարի 18-ին, ուժի մեջ է մտել 2005 թվականի փետրվարի 10-ին։ Օրենսգրքի վիճարկող 115 հոդվածը փոփոխվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006թ. հունիսի 13-ին ընդունված՝ «ՀՀ քրեակադարձական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կադարձելու մասին» ՀՀ օրենքով, որը ՀՀ Նախագահի կողմից սպորագրվել է 2006թ. հունիսի 16-ին եւ ուժի մեջ է մտել 2006թ. հուլիսի 21-ին։ Նշված օրենքով օրենսգրքի 115 հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ։ Այն փոփոխվել է նաև «ՀՀ քրեակադարձական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կադարձելու մասին» ՀՀ ՇՕ-268-Ն օրենքով, որը ՀՀ Նախագահի կողմից սպորագրվել է 2007թ. դեկտեմբերի 8-ին եւ ՀՀ պաշտոնական գրեթեկագրում հրապարակվել է 2007թ. դեկտեմբերի 19-ին։**

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006թ. հունիսի 13-ին ընդունված՝ «ՀՀ քրեակադարձական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կադարձելու մասին» ՀՀ օրենքի հիման վրա օրենսգրքի վեճի առարկա 115 հոդվածը վերնագրված է։ «ՊԱՏԻԺԸ ԿՐԵԼՈՒՅ ՊԱՅՄԱՆԱԿԱՎ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶՎԱՏԵԼՈՒ ԿԱՄ ՊԱՏԺԻ ՉԿՐԱԾ ՄԱՍՆ ԱՎԵԼԻ ՄԵՂՄ ՊԱՏԺԱՏԵՄԱԿՈՎ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՆԵՐԿԱՑԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ»։ Հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ։

«1. Պարփի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պարփիժը կադարող հիմնարկի վարչակազմը մեկամսյա ժամկետում պարփակիր լսում է կարգապահական գույժ չունեցող դատապարբյալին պարփիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազարտելու կամ պարփի չկրած մասն ավելի մեղմ պարժագրեսակով փոխարինելու ներկայացման հարցը։

Պարփիժը կադարող հիմնարկի վարչակազմը միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կադարձելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազարփակման դատապարբյալ անձին պարփիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազարտելու կամ պարփի չկրած մասն ավելի մեղմ պարժագրեսակով փոխարինելու

վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելու մասին որոշում կայացնելու դեպքում որոշումը ներկայացնում է պարփակ կրելուց պայմանական վաղաժամկետ ազարելու, պարփի չկրած մասն ավելի մեղմ պարփակեալով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությանը:

**Պարփակ** կարարող հիմնարկի վարչակազմը միջնորդագիր է ներկայացնում դարպարան միջին, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կարարելու համար որոշակի ժամկետով կամ ցմահ ազարփակման դարպապարփած անձին պարփակ կրելուց պայմանական վաղաժամկետ ազարելու կամ պարփի չկրած մասն ավելի մեղմ պարփակեալով փոխարինելու վերաբերյալ միայն պարփակ կրելուց պայմանական վաղաժամկետ ազարելու, պարփի չկրած մասն ավելի մեղմ պարփակեալով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի հավանությունն սրանալու դեպքում:

2. **Պարփակ** կրելուց պայմանական վաղաժամկետ ազարելու կամ պարփի չկրած մասն ավելի մեղմ պարփակեալով փոխարինելու վերաբերյալ դարպարան ներկայացվող միջնորդագրի հետ ներկայացվում է նաև դարպապարփյալի անձնական գործը:

3. **Պարփակ** կրելուց պայմանական վաղաժամկետ ազարելու կամ պարփի չկրած մասն ավելի մեղմ պարփակեալով փոխարինելու վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելու մասին որոշումը պարփակ կրելուց պայմանական վաղաժամկետ ազարելու, պարփի չկրած մասն ավելի մեղմ պարփակեալով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի՝ հավանություն չփալու մասին որոշումն սրանալու դեպքում պարփակ կարարող հիմնարկի վարչակազմը դարպապարփյալին պարփակ կրելուց պայմանական վաղաժամկետ ազարելու կամ պարփի չկրած մասն ավելի մեղմ պարփակեալով փոխարինելու ներկայացման հարցը քննարկում է հավանություն չսրանալու որոշումը կայացվելուց երեք ամիս անց, բացառությամբ սույն օրենսգրքի 116-րդ հոդվածով նախարեաված դեպքերի:

**Պարփակ** կրելուց պայմանական վաղաժամկետ ազարելը կամ պարփի չկրած մասն ավելի մեղմ պարփակեալով փոխարինելը դարպարանի կողմից մերժվելու դեպքում նույն հիմքով միջնորդություն կրկին կարող է ներկայացվել դարպարան մերժման որոշումը կայացվելուց վեց ամիս անց, բացառությամբ սույն օրենսգրքի 116-րդ հոդվածով նախարեաված դեպքերի:

4. **Պարփակ** կարարող հիմնարկի վարչակազմի որոշումները օրենսդրությանը հակասելու դեպքում կարող են բողոքարկվել դարպարական կարգով: **Պարփակ** կրելուց պայմանական վաղաժամկետ ազարելու, պարփի չկրած մասն ավելի մեղմ

պարժապեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ այն դեպքերի, երբ որոշումները կայացվել են Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված կարգի խախտմամբ»:

«Ազգային ժողովի կողմից 2007թ. նոյեմբերի 13-ին նույնպես փոփոխություններ են կապարվել ՀՀ քրեակապարողական օրենսգրքի՝ քննության առարկա գործի հետ անմիջական առնչություն ունեցող 114 և 115 հոդվածներում եւ օրենսգիրքը լրացվել է նոր՝ 115<sup>1</sup> հոդվածով։ Համաձայն այդ փոփոխությունների՝ օրենսգրքի 114 հոդվածի 2-րդ մասում «Դարպապարպյալին» բառը փոխարինվել է «Որոշակի ժամկետով կամ ցմահ ազարագրկման դարպապարպված անձին» բառերով։ Այդ մասը լրացվել է նաև հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերությունով։ «Կարգապահական գումարդակի հրամանագրարության կողմից կարգապահական գումարդակում պարիժ կրող դարպապարպյալին պարիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազարելու հարցը ներկայացվում է սույն օրենսգրքի 115<sup>1</sup>-րդ հոդվածին համապատասխան»։

Օրենսգրքի 115 հոդվածի վերնագիրը շարադրվել է հետեւյալ խմբագրությամբ։ «Որոշակի ժամկետով կամ ցմահ ազարագրկման դարպապարպված անձին պարիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազարելու կամ պարիժի չկրած մասն ավելի մեղմ պարժապեսակով փոխարինելու ներկայացման կարգը»։ Նույն հոդվածի 4-րդ մասից հանվել է «օրենսդրությանը հակասելու դեպքում» բառերը։

Օրենսգրքի 115<sup>1</sup> հոդվածը վերնագրված է «Կարգապահական գումարդակում պահելու դարպապարպված անձին պարիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազարելու ներկայացման կարգը»։ Այն նախապեսում է։

«1. Պարիժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում կարգապահական գումարդակի հրամանագրարը մեկամսյա ժամկետում պարտադիր միջնորդագիր է ներկայացնում դարպարան՝ կարգապահական գույժ չունեցող դարպապարպյալին պարիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազարելու վերաբերյալ։

2. Պարիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազարելու վերաբերյալ միջնորդագրի հետ դարպարան է ներկայացվում նաև դարպապարպյալի անձնական գործը։

3. Դարպարանի կողմից միջնորդությունը մերժվելու դեպքում նույն հիմքով միջնորդությունը կրկին կարող է ներկայացվել դարպարան՝ մերժման որոշումը կայացվելուց հետո ոչ շուրջ, քան վեց ամիս անց։

4. Կարգապահական գումարքակի հրամանագրարի կողմից սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը չկագարելը կարող է բռնքարկվել դագական կարգով»:

Հայաստանի Հանրապետության քրեական դագավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից սպորազրվել՝ 1998թ. սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

«ՀՀ քրեական դագավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կագարելու մասին» ՀՀ ՇՕ-67-Ն օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2006 թվականի հունիսի 13-ին, ՀՀ Նախագահի կողմից սպորազրվել՝ 2006 թվականի հունիսի 16-ին, ուժի մեջ է մտել 2006 թվականի հուլիսի 21-ին: Օրենքի 5 հոդվածով փոփոխության է ենթարկվել ՀՀ քրեական դագավարության օրենսգրքի 434 հոդվածը, որի 1-ին մասից հանվել է հետևյալ բովանդակությամբ երրորդ նախադասությունը. «Պարժից պայմանական վաղակեպ ազաքելու եւ պարժի չկրած մասն ավելի մեղմ պարժով փոխարինելու մասին միջնորդագիր դագարան կարող են ներկայացնել նաև դագապարզյալը, նրա պաշտպանը կամ օրինական ներկայացուցիչը»:

Սահմանադրական դագարանն արձանագրում է նաև, որ «ՀՀ քրեական դագավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կագարելու մասին» ՀՀ ՇՕ-91-Ն օրենքով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2006 թվականի մայիսի 25-ին, ՀՀ Նախագահի կողմից սպորազրվել՝ 2006 թվականի հունիսի 20-ին եւ ուժի մեջ է մտել 2006 թվականի հուլիսի 8-ին, նույնպես կագարվել է (հոդվ. 107) ՀՀ քրեական դագավարության օրենսգրքի 434 հոդվածի ճիշգ նույնարովանդակ փոփոխություն: Պարագայությունը կողմից բացադրությամբ դա ընդունվել է «...ժամանակային փոքր դարբերությամբ» եւ «...ՀՀ սահմանադրական դագարանում վիճարկման առարկա հանդիսացող դրույթի առումով իրավական հետեւանք չի առաջացնում»: Սահմանադրական դագարանը, երեւույթն արդառոց գնահատելով հանդերձ, գրնում է, որ նման իրավիճակում սահմանադրականության հարցով դագարանի կողմից ընդունվող որոշումը հավասարապես պետք է վերաբերի օրենքի հիշյալ երկու փոփոխություններին:

2. Դիմող կողմը վիճարկում է նշված ՀՀ ՇՕ-67-Ն օրենքի 5 եւ ՀՀ քրեակապարողական օրենսգրքի 115 հոդվածների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասին, 19 հոդվածի 1-ին մասին եւ 20 հոդվածի 4-րդ մասին՝ համակցված 43 եւ 44 հոդվածների հետ, այն հիմքով, որ վիճարկող

հոդվածների դրույթներով դադապարպյալները գրկվել են վաղաժամկետ ազաքելու միջնորդագրով անմիջականորեն դադարան դիմելու հնարավորությունից:

Դիմող կողմն օրենսգրքի 115 հոդվածի սահմանադրականությունը վիճարկում է նաև այն հիմքով, որ այն ոչ միայն դադապարպյալին գրկում է անմիջականորեն դադարան դիմելու հնարավորությունից՝ սբեղծելով երկակի միջնորդավորված կարգ, այլ նաև այն հիմքով, որ թույլ չի տալիս բողոքարկել պարփիծը կրելուց պայմանական վաղաժամկետ ազաքելու հարցերով անկախ հանձնաժողովի որոշումները:

Դիմող կողմը գրնում է, որ ոչ միայն խախտվել է Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասում ամրագրված իր իրավունքը, այլև հաշվի չեն առնվել նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2003)22 հանձնարարականի պահանջները՝ պայմանական վաղաժամկետ ազաքելու վերաբերյալ:

Դիմողը գրնում է, որ **«**քրեակարարողական օրենսգրքի 115 հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը հնարավորություն չի տալիս դադապարպյալին անմիջականորեն դիմել դադարան, իսկ նույն հոդվածի 4-րդ մասն անձին գրկում է իր իրավունքների ու ազաքությունների «...ենթադրյալ խախումը դադարական կարգով վիճարկելու հնարավորությունից»։ Ըստ դիմողի՝ վիճարկվող օրենքները հակասում են Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մասին, 19 հոդվածի 1-ին մասին եւ 20 հոդվածի 4-րդ մասին, որոնք պետքության վրա պոզիվիվ պարբավորություն են դնում ապահովելու դադապարպյալի՝ նշանակված պարփիծը մեղմացնելու խնդրանքի իրավունքը, ինչպես նաև այդ իրավունքի խախուման դեպքում՝ արդյունավետ պաշտպանության միջոցներ փրանադրելու իրավունքը։ Դա ենթադրում է, որ պետք է լինի մարմին, որն իրավասու է քննարկել պարփիծը մեղմացնելու հարցը, իսկ այն դեպքում, եթե հարցը քննարկելու ժամանակ խախումը են անձի իրավունքները եւ (կամ) ազաքությունները, ապա՝ մարմին, որն իրավասու է վերականգնել խախումը իրավունքները։ Ըստ դիմողի՝ այդ մարմինները դադարաններն են, սակայն վեճի առարկա օրենքները դադարաններին գրկել են այդ լիազորություններից»։

**3. Դադապախանող կողմն առարկելով դիմողի փաստարկների դեմ՝ գրնում է, որ **«**Սահմանադրության հիշապակվող նորմերի պահանջները հսկակ ապահովում են ՀՀ օրենսդրությամբ։ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասով երաշխավորված իրավունքը «...պետքության կողմից սբեղծված իրավասու մարմիններին դիմելու յուրաքանչյուր դադապարպյալին ընձեռված հնարավորություն է», իսկ **«**քրեական օրենսգրքի 76 հոդվածը նախադասում է, որ պարփիծը կրելուց պայմանական վաղաժամկետ ազաքման մասին որոշում ընդունող մարմինը դադարանն է։ Միաժամանակ,**

« քրեական, քրեական դափավարության և քրեակափարողական օրենսգրքերը սահմանում են այդ հարաբերությունների բոլոր մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները: Ըստ պարասխանողի՝ մասնավորապես « քրեական օրենսգրքի 12-րդ գլուխը նվիրված է պարժից ազարելու ինսդիվուտին և հսկակ սահմանված են ինչպես պարփիջը կրելուց պայմանական վաղաժամկետ ազարելու, այնպես էլ պարժի չկրած մասն ավելի մեղմ պարժագեսակով փոխարինելու հիմքերը: »

Պարասխանող կողմի կարծիքով, « Սահմանադրությունը, ամրագրելով յուրաքանչյուր դափապարփյալի՝ ներման կամ նշանակված պարփիջը մեղմացնելու խնդրանքի իրավունքը, ուղղակիորեն չի նշում, թե ում է ուղղված խնդրանքը, առավել եւս չի նշում, որ խնդրանքն ուղղակիորեն դափապարփյալի կողմից պետք է ներկայացվի խնդրանքի լուծման իրավագորություն ունեցող մարմնին՝ նշված հարցի լուծումը թողնելով օրենսդրի կարգավորմանը: »

Պարասխանողը գրնում է, որ «...եթե խախրվել է դափապարփյալի՝ ներման կամ նշանակված պարփիջը մեղմացնելու՝ Սահմանադրությամբ երաշխավորված խնդրանքի (եւ ոչ թե խնդրանքի բավարարման) իրավունքը (օրինակ, իրավասու մարմինը օրենքով սահմանված կարգով չի ընդունել կամ քննել խնդրանքը կամ պարժի ժամկետի օրենքով սահմանված մասը լրանալու դեպքում պարփիջը կափարող հիմնարկի վարչակազմը մեկամյա ժամկետում չի լսել կարգապահական գույժ չունեցող դափապարփյալին պարփիջը կրելուց պայմանական վաղաժամկետ ազարելու եւ պարժի չկրած մասն ավելի մեղմ պարժագեսակով փոխարինելու ներկայացման հարցը, Հայաստանի Հանրապետության Նախագահի 2006թ.-ի հուլիսի 31-ի ՆՀ-163-Ն հրամանագրի 7-րդ կետով սահմանված կարգով ենթահանձնաժողովը ոչ ուշ, քան մինչեւ յուրաքանչյուր ամավա 15-րդ օրը չի այցելել պարփիջ կափարող հիմնարկ, չի ծանոթացել դափապարփյալի անձնական գործին կամ մեկուսի չի հանդիպել նրա հետո), վերջինս միանշանակորեն կարող է օգնվել « Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներով երաշխավորված դափական պաշտպանության իրավունքից»:

**4. « Սահմանադրական դափարանն արձանագրում է, որ « Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասն ամրագրում է յուրաքանչյուր դափապարփյալի՝ ներման կամ նշանակված պարփիջը մեղմացնելու խնդրանքի իրավունքը: Համաձայն այդ հոդվածի՝ ներման կամ նշանակված պարփիջը մեղմացնելու խնդրանքի իրավունքը վերապահված է յուրաքանչյուր դափապարփյալի: Սահմանադրության 43 հոդվածը 20 հոդվածի 4-րդ մասում ամրագրված իրավունքը չի դիմարկում որպես այդ հոդվածի**

հիմքերով սահմանափակվող իրավունք: ՀՀ Սահմանադրության 44 հոդվածին համապարասիան՝ այդ իրավունքը չի կարող նույնիսկ օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արդարական դրության ժամանակ:

Ներման ինսպիրություն իրենից ներկայացնում է հանցագործություն կապարած անձի նկարմամբ՝ մարդու արժանապարփությունը հարգելու, մարդասիրության, արդարության սահմանադրական սկզբունքների անմիջական գործողության դրսեւորում: Ըստ ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 17-րդ կետի՝ ներում շնորհելը ՀՀ Նախագահի բացառիկ իրավասությունն է:

Ներման դրսեւորման ձևերը բացահայտված են ՀՀ քրեական օրենսգրքի 83 հոդվածում: Վերջինիս համաձայն՝ «հանցագործության համար դարպապարփակված անձը ներման ակտով կարող է լրիվ կամ մասնակիորեն ազարտվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ պարմից, կամ պարմի չկրած մասը կարող է փոխարինվել ավելի մեղմ պարմագրեսակով, կամ կարող է վերացվել դարպածությունը»: Շոդվածի բովանդակությունը վկայում է, որ օրենքը գործերակում է ներման երկու գործերական՝ **լրիվ ներում** (պարմից լրիվ ազարում, ներառյալ՝ հետեւանքները) եւ **մասնակի ներում** (պարմից մասնակի ազարում կամ պարմի չկրած մասի փոխարինում ավելի մեղմ պարմով): Ներում շնորհելու գործընթացը կարգավորվում է ՀՀ Նախագահի 2003թ. նոյեմբերի 19-ի՝ «Ներման խնդրագրերի կարգը հասրապելու մասին» հրամանագրով:

Ներման ինսպիրությունը կիրառման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման ուսումնամարդությունը վկայում է, որ ներում հայցելու իրավունքի իրացման համար որեւէ նախապայման սահմանված չէ, ներում կարող է հայցել յուրաքանչյուր դարպապարփյալ, ներումը կարող է շնորհվել յուրաքանչյուր դարպապարփյալի՝ անկախ կարգաված հանցագործության բնույթից, ծանրությունից ու այլ հանգամանքներից (մասնավորապես, պարմագրակից, պարմի կրած մասից): Ներում շնորհելու համար որեւէ պարփառիր չափանիշ նախադեսված չէ, այն ամբողջությամբ թողնված է ՀՀ Նախագահի հայեցողությանը. Նախագահի՝ ներում շնորհելու իրավունքը սահմանափակված չէ ոչ դարպապարփյալների շրջանակով, ոչ հանցագործությունների բնույթով, ոչ պարմագրեսակներով ու պարմագրակերով:

Ներման ինսպիրությունը օրենսդրական կարգավորումը վկայում է այն մասին, որ ներման խնդրանքի իրավունքի իրացման համար որեւէ սահմանափակում նախադեսված չէ, հետեւաբար, ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասի դրույթին համահունչ, ներում հայցելու իրավունքից կարող է օգտվել յուրաքանչյուր դարպապարփյալ, եւ ՀՀ Նախագահը ներում կարող է շնորհել յուրաքանչյուր դարպապարփյալի:

**5. Մարդասիրության սկզբունքի դրսեւորման ձեւերից է նաև դադապարպյալին պարժից ազագելու քրեահրավական ինսպիրութը:** Այդ ինսպիրութի էությունը կայանում է նրանում, որ հանցագործության համար դադապարպյալ անձը, քրեական օրենքով նախագեսված հիմքերով, կարող է դադարանի կողմից փաստացիորեն ազագվել պարժի հետագա կրումից: Պարժից ազագելու համար նյութական հիմք է հանդիսանում պարժի կրելու աննպատակահարմարությունը կամ անհնարինությունը, հաշվի առնելով դպյալ դադապարպյալի՝ հանրորեն վգանգավոր լինելու հանգամանքի վերացումը, դադապարպյալի առողջական վիճակի վարթարացման փաստը կամ քրեական իրավունքի փոփոխությունը: Պարժից ազագելու ինսպիրութի նշանակությունը կայանում է նրանում, որ թույլ դրանով անգետել քրեական հարկադրանքի միջոցները, խթանում է դադապարպյալի վերադասդիրակումը, նպաստում է նրա ընդելացմանն իրավակարգի պահանջներին, սոցիալական վարքագծի կանոններին, ինչպես նաև բացառում է պարժի կիրառումն այն դեպքերում, եթե պարժի կիրառման նպատակներին հասնելը դառնում է ոչ իրական:

Այս ինսպիրութի դրսեւորման՝ ՀՀ քրեական օրենսդրությամբ նախագեսված ձեւերն են՝ պարժի կրելուց պայմանական վաղաժամկետ ազագելը (ՀՀ ԶՕ 76 հոդված), պարժի չկրած մասն ավելի մեղմ պարժագետակով փոխարինելը (ՀՀ ԶՕ 77 հոդված), հղի կանանց կամ մինչեւ երեք դարեւեկան երեխա ունեցող անձանց պարժի կրելը հետաձգելը կամ պարժից ազագելը (ՀՀ ԶՕ 78 հոդված), պարժից ազագելը ծանր հիվանդության հետեւանքով (ՀՀ ԶՕ 79 հոդված), պարժից ազագելն արդարգ հանգամանքների հետեւանքով (ՀՀ ԶՕ 80 հոդված), ինչպես նաև պարժից ազագելը մեղադրական դադապյալի վաղեմության ժամկետն անցնելու հետեւանքով (ՀՀ ԶՕ 81 հոդված): Նշված ձեւերից յուրաքանչյուրի կիրառման դեպքում դադապարպյալը պետք է բավարարի քրեական օրենսդրությամբ սահմանված որոշակի պայմաններ ու հիմքեր, որով սահմանափակվում է այն անձանց շրջանակը, ում նկարմամբ դրանք կարող են կիրառվել: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 76 հոդվածի համաձայն՝ պայմանական վաղաժամկետ ազագումը հնարավոր է միայն այնպիսի պարժագետակների դեպքում, ինչպիսիք են ազագագրկումը եւ կարգապահական գումարդրակում պահելը: Պայմանական վաղաժամկետ ազագումը հնարավոր է, եթե դադապարպյալը փաստացի կրել է դադարանի կողմից սահմանված պարժի որոշակի մասը: Ելնելով հանցագործության ծանրությունից՝ պայմանական վաղաժամկետ ազագման համար ՀՀ քրեական օրենսգիրքը նախագետել է դարբեր ժամկետներ: Պարժից ազագելու այս ձեւը կիրառվում է, եթե դադարանը գրնում է, որ դա-

դապարփյալն ուղղվելու համար նշանակված պարժի մնացած մասը կրելու կարիք չունի: Պարժիքը կրելուց պայմանական վաղաժամկետ ազարում կիրառելիս դարբարանը հաշվի է առնում նաև դարբարփյալի կողմից գումարության պարճառված վնասը հարթելու հանգամանքը:

**ՀՀ ԶՕ 77, 80 հոդվածներում նախարեսված՝ պարժից ազարելու ձեւերը** կիրառելի են միայն ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար ազարգրկված դարբարփյալների նկարմամբ:

Պարժից պայմանական վաղաժամկետ ազարելու ինսպիրութի առանձնահարկությունը կայանում է նրանում, որ, ի վարբերություն պարժից ազարելու մնացած ձեւերի, պարժից ազարելու խնդրո առարկա ձեւն իր բնույթով հանդիսանում է **պայմանական**, քանի որ պարժից ազարվող դարբարփյալը գրնվում է վերահսկողության ներքո, նրա վրա դրվում են որոշակի պարզականություններ, որոնք չկարարելու դեպքում դարբարանը կարող է որոշում կայացնել պայմանական վաղաժամկետ ազարումը վերացնելու եւ պարժի չկրած մասն ի կարար ածելու մասին:

Պարժից ազարելու պայմանական բնույթը պայմանավորում է մեկ այլ առանձնահարկություն եւս (այս առանձնահարկությունը վերաբերում է նաև ԶՕ 78 հոդվածով նախարեսված՝ պարժից ազարելու ձեւին), այն է՝ եթե պարժից ազարելու մյուս ձեւերի կիրառման արդյունքում վերացվում են կարարված հանցագործության բոլոր հետեւանքները, ապա պարժից պայմանական վաղաժամկետ ազարված դարբարփյալը մինչեւ դարբարանի կողմից նշանակված պարժամկետի ավարտը շարունակում է համարվել դարպանակություն ունեցող, ինչը հաշվի է առնվում փորձաշրջանում հանցագործություն կարարելու դեպքում պարիժ նշանակելիս (պարիժ նշանակվում է դարբավճիռների համակցությամբ (ԶՕ հոդված 67)):

**6. Ներման ինսպիրութի եւ պարժից ազարելու քրեաիրավական ինսպիրութի, այդ թվում՝ նաև պարժից պայմանական վաղաժամկետ ազարելու ինսպիրութի սահմանադրախրավական բովանդակության վերլուծությունը վկայում է, որ այդ երկու ինսպիրութի միջեւ հիմնական բովանդակային սկզբունքային գործերությունը կայանում է նրանում, որ, ի վարբերություն ներման ինսպիրութի, պարժից ազարելու ինսպիրութի դրսեւորման բոլոր ձեւերի, այդ թվում՝ նաև պարժից պայմանական վաղաժամկետ ազարման կիրառման համար նախարեսված են որոշակի պայմաններ եւ հիմքեր, որոնք սահմանափակում են այդ ձեւերից օգրվելու հնարավորություն ունեցող դարբարփյալների շրջանակը, ինչի արդյունքում նման**

հնարավորությունը չի գործածվում **յուրաքանչյուր դադապարպյալի** վրա: Մինչեւ ներում հայցելու իրավունքի իրացումը որեւէ նախապայմանով պայմանավորված չէ, ինչի արդյունքում որեւէ կերպ չի սահմանափակվում ներում հայցելու իրավունք ունեցող դադապարպյալների շրջանակը՝ անկախ պարփիծը կրելու ժամկետից, եւ, հետեւաբար, **այդ իրավունքից կարող է օգտվել յուրաքանչյուր դադապարպյալ:**

Ելնելով վերոշարադրյալից, սահմանադրական դադարանը գրնում է, որ **ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասում կիրառված «նշանակված պարփիծը մեղմացնել» եզրույթի այնպիսի մեկնարանությունը, որի դեպքում այդ եզրույթը ներառում է նաև պարփից ազադելու ինսպիրուտուրը, անհամարեղեկի է այդ դրույթի բովանդակության հետ եւ դուրս է այդ դրույթի դրամարանությունը հանգում է նրան, որ այն գործում է միայն որոշակի պայմանների եւ հիմքերի առկայության դեպքում, հետեւաբար՝ նաև դադապարպյալների որոշակի շրջանակի համար: Ուստի պարփից ազադելու ինսպիրուտի եւ դրա առանձին դրսեւորումների դրամարանությունն անհամարեղեկի է **ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասում ամրագրված դրույթի հետ**, որպես «նշանակված պարփիծը մեղմացնել» եզրույթն օգտագործված է եւ ենթակա է ընկալման **մասնակի (պարփիծը մեղմացնող)** ներում իմաստով, ինչպես այն ներկայացված է **ՀՀ քրեական օրենսգրքի 83 հոդվածում**:**

Ավելին, պարփից պայմանական վաղաժամկետ ազադման դեպքում օրենքը նախապեսում է նաև այն վերացնելու հնարավորություն: **Պարփիծը մեղմացնելու խնդրանքի իրավունքը ենթադրում է**, որ այդ խնդրանքի բավարարումը պետք է լինի վերացման ոչ ենթակա: Ուստի պարփից պայմանական վաղաժամկետ ազադելու ինսպիրուտին այս առումով եւս անհամարեղեկի է **ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասի դրամարանության հետ**:

**Նաշվի առնելով ներման եւ պարփից ազադելու ինսպիրուտիների**, դրանց բովանդակության, Էության, սոցիալական նշանակության եւ նպատակների միջեւ առկա սկզբունքային եւ անհամարեղեկի առանձնահավկություններն ու դարբերությունները, սահմանադրական դադարանն արձանագրում է, որ **ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 4-րդ մասում խոսքը վերաբերում է ոչ թե ներման եւ պարփից ազադելու դարաբնույթ երկու առանձին ինսպիրուտներին, այլ ներման ինսպիրուտի գործադրման երկու դադարպարեսակներին՝ ներման լրիվ եւ մասնակի ձեւերին:**

Ինչպես հսկում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2003թ. սեպտեմբերի 24-ին ընդունած թիվ (2003) 22 հանձնարարականում, պայմանական վաղաժամկետ ազադումը չի ներառում համաներումը կամ ներումը: Այն ենթադրում է

դարապարպված բանդարկյալներին ժամկեփից շուրջ ազարելը՝ ազարվելուց հետո ընկած ժամանակահարպվածի անհարականացված պայմանների ներքո (հանձնարարականի հավելված, մաս առաջին, կետ 1-ին): Նույն հանձնարարականում որպես ընդհանուր սկզբունքներ են դիմարկվում, որ պայմանական վաղաժամկեփ ազարման նպարակն է օգնել բանդարկյալներին «անցում կարարել բանդի կյանքից դեպի համայնքի օրինապահ կյանք»՝ միաժամանակ ապահովելով հանրության անվտանգությունը: Հնդ որում, եթե ներման կամ համաներման դեպքում խոսքը վերաբերում է ներմանը կամ նշանակված պարփակ մեղմացնելուն, ապա այս դեպքում գործ ունենք «պայմանական ազարման» ինսպիրուտիվի հետ: Վերջինս ենթադրում է, նախ օրենսդրությամբ նախարեսվող պայմաններ ու համապարասխան վերահսկողություն, ապա, այդ պայմանները չպահպանելու դեպքում՝ համապարասխան իրավական հետեւանքներ:

**7. ՀՀ գործող օրենսդրության, մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 70 և 76 հոդվածների, ՀՀ քրեական դարավարության օրենսգրքի 434 հոդվածի դրույթների վերլուծությունը վկայում է, որ**

ա) պայմանական վաղաժամկեփ ազարման և համապարասխան վերահսկողական պայմանների սահմանման իրավասությունը վերապահված է դարարանին՝ պարփակ կիրառումն իրականացնող մարմնի միջնորդության դեպքում,

բ) այն իրականացվում է օրենքով նախարեսված որոշակի պայմանների առկայության դեպքում և պայմանավորված չէ դարապարփյալների դիմումով կամ խնդրանքով, այլ վերաբերում է բոլոր այն բանդարկյալներին, որոնք համապարասխանում են օրինապահ քաղաքացիներ դատնալու նվազագույն երաշխիքներին,

գ) օրենքը փարբերակած մոփեցում է ցուցաբերում փարբեր հանցագործությունների համար դարապարփված անձանց նկարմամբ,

դ) նախարեսվում են ներգործուն միջոցներ՝ վաղաժամկեփ ազարման պայմանները խախտելու համար,

ե) վաղաժամկեփ ազարման նպարակը բոլոր դարապարփյալների համար նախապես հայրնի խրախուսելի հնարավորություն է՝ հանրային ազար կյանքին սահուն անցում կարարելու համար, առանց վրանգելու հասարակական կարգն ու այլոց իրավունքներն ու ազարությունները,

զ) Հայաստանի Հանրապետությունը վաղաժամկեփ ազարելու հարցը որոշելու համար որդեգրել է, այսպես կոչված, հայեցողական ազարման համակարգը, որն առկա է նաև եվրոպական շաբ երկրներում: Այդ համակարգի բնորոշ առանձնա-

հարկություններից ելնելով է, որ ՀՀ քրեական դարպարության օրենսգրքի 434, 437, 438 հոդվածներով, ՀՀ քրեակարողական օրենսգրքի 114, 115 և 115<sup>1</sup> հոդվածներով, ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 24-ի թիվ 1304-Ն որոշմամբ, ինչպես նաև ՀՀ Նախագահի 2006թ. հուլիսի 31-ի թիվ ՆԴ-163-Ն հրամանագրով սահմանվել են պարփակ կրելուց պայմանական վաղաժամկետ ազարելու, պարփի չկրած մասն ավելի մեղմ պարփակեսակով փոխարինելու ընթացակարգերը:

**8. Պայմանական վաղաժամկետ ազարելու մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի վերոհիշյալ հանձնարարականը պարունակում է մի շարք սկզբունքային դրույթներ, որոնք էական նշանակություն ունեն իրավական պետությունում պայմանական վաղաժամկետ ազարման այս կամ այն մողեկի ընդունության հարցում: Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունը, ի թիվս բազմաթիվ այլ երկրների, որդեգրել է «հայեցողական ազարման» համակարգը, սահմանադրական դարպարանն անհրաժեշտ է համարում ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ համաձայն վերոհիշյալ Հանձնարարականի՝ հայեցողական ազարման համակարգի դեպքում:**

ա) նվազագույն ժամկետը, որը բանդարկյալները պետք է կրեն պայմանական վաղաժամկետ ազարվելուն ենթակա լինելու համար, պետք է սահմանված լինի օրենքով,

բ) պետք է ճգփել որոշումը կայացնել բանդարկյալի կողմից նվազագույն ժամկետը կրելուց հետո որքան հնարավոր է շուրջ,

գ) պայմանական վաղաժամկետ ազարելու համար պահանջվող չափանիշները պետք է լինեն պարզորոշ եւ հսկակ: Դրանք պետք է լինեն նաև իրական՝ այն իմաստով, որ պետք է հաշվի առնեն բանդարկյալների անձը, սոցիալական եւ գնորեսական հանգամանքները, ինչպես նաև վերաբնակեցման ծրագրերի առկայությունը,

դ) պայմանական վաղաժամկետ ազարելուց հետո աշխարհանքի հնարավորությունների բացակայությունը կամ մշղական ապրելավայր ունենալու բացակայության հանգամանքը չպետք է հիմք հանդիսանան այն մերժելու կամ հերքածելու համար,

ե) պայմանական վաղաժամկետ ազարելու չափանիշները պետք է կիրառվեն այնպես, որպեսզի ազարման թույլպվություն փրփի բոլոր այն բանդարկյալներին, որոնք համապարասիստում են օրինապահ քաղաքացիներ դառնալու նվազագույն երաշխիքներին: Միաժամանակ, իշխանությունները պարփակոր են ցույց դալ, որ բանդարկյալը չի համապարասիստում այդ չափանիշներին,

զ) Եթե որոշում կայացնող մարմինը որոշում է մերժել պայմանական վաղաժամկեփ ազարելը, այն պեսք է սահմանի հարցը վերանայելու օր: Բոլոր դեպքերում, բանբարկյալները պեսք է հնարավորություն ունենան կրկին դիմել որոշում կայացնող մարմնին՝ այն պահից, եթե իրենց իրավիճակն էականորեն փոխվել է հօգուտ իրենց:

« Գործող օրենսդրության համեմատական վերլուծությունը վկայում է, որ, մասնավորապես, պարզորոշ ու հսկակ սահմանված չեն պայմանական վաղաժամկեփ ազարելու համար պահանջվող չափանիշները: « Քրեական օրենսգրքի դրույթների, քրեական դափավարության օրենսգրքի ու քրեակափարողական օրենսգրքի՝ քննության առարկա դրույթների ու դրանց փոփոխությունների, համապատասխան ենթաօրենսդրական ակդերի համեմատական վերլուծությունը վկայում է, որ իրավաչափ կլիներ, որպեսզի պարժի պայմանական վաղաժամկեփ ազարման ողջ գործընթացը (այդ թվում՝ ժամկեփները, չափանիշները, պետական մարմինների գործունեության կարգը և հայեցական լիազորությունների շրջանակը)՝ « Կողմից որդեգրված կոնկրետ կարգի շրջանակներում, առավել հսկակ սահմանվեր օրենսդրությամբ:

**9. Դիմողի այն պնդումը, որ դափապարփյալին պայմանական վաղաժամկեփ ազարելու հարցով անմիջականորեն դարձարան դիմելու հնարավորությունից գրկելը հակասում է « Սահմանադրության 18 հոդվածի պահանջներին, հիմնավոր չեն: Նշված հարցով անմիջական դարձարան դիմելու հնարավորությունը չի առնչվում դափական պաշտպանության իրավունքին: « Սահմանադրության 18 հոդվածը երաշխավորում է դափական պաշտպանության իրավունքը, եթե առկա է **Խախուված իրավունքների պաշտպանության խնդիր:** Մինչեւ պարժից պայմանական վաղաժամկեփ ազարման քրեափակական ինսպիրուտուրի բովանդակությունը կազմում է պետքության կողմից հումանիզմի դրսեւորում հանդիսացող՝ դափապարփյալին դրվող **իրավական հնարավորություն**, այլ ոչ թե դափապարփյալ՝ պարժից պայմանական վաղաժամկեփ ազարվելու **իրավունք:** Այդ մասին է վկայում այդ ինսպիրուտի կիրառման հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորումը. մասնավորապես, դափապարփյալն ինքը կամ նրա ներկայացուցիչը պարժից վաղաժամկեփ ազարելու ներկայացման գործընթացի նախաձեռնությանը մասնակցություն չի ունենում. ներկայացման հարցն օրենքի ուժով, համապատասխան ժամկեփը լրանալուց հետո, առանց դափապարփյալի խնդրանքի կամ դիմումի (սակայն նրա համաձայնությամբ), պարփաղիր կարգով քննության է առնում քրեակափարողական**

հիմնարկի վարչական հանձնաժողովը: Ներեւաբար, այս դեպքում չի կարող խոսքը վերաբերել խախտված իրավունքին, հերեւաբար՝ նաև դրա դադարական պաշտպանությանը: Նման հարց կարող է առաջանալ միայն այն դեպքում, եթե խախտվել է պայմանական վաղաժամկետ ազարման՝ օրենքով սահմանված կարգը:

Ինչ վերաբերում է դիմողի այն պնդմանը, որ դադարաբյալին պայմանական վաղաժամկետ ազարելու հարցով անմիջականորեն դադարան դիմելու հնարավորությունից զրկելը հակասում է ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի պահանջներին՝ խախտելով դադարանի մաքչելիության իրավունքը, ապա հարկ է նշել, որ նշված հարցով դադարան դիմելու ոչ անմիջական հնարավորությունը չի առնչվում դադարանի մաքչելիության իրավունքին: ՀՀ Սահմանադրության 19 հոդվածը երաշխավորում է դադարանի մաքչելիության իրավունքը, եթե առկա է կամ **Խախտված իրավունքները վերականգնելու, կամ ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու** անհրաժեշտություն: Մինչդեռ պարժից պայմանական վաղաժամկետ ազարելու համար դիմելու դեպքում հարցը չի առնչվում ոչ խախտված իրավունքների վերականգնմանը, ոչ էլ ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու անհրաժեշտությանը: Նման անհրաժեշտություն կարող է առաջանալ օրենքով նախադեսված կարգի խախտման, ինչպես նաև պայմանական վաղաժամկետ ազարման հարցում օրենքով սահմանված կարգով որոշակի լիազորություն իրականացնող հանձնաժողովների գործողությունների կամ անգործության բողոքարկման առնչությամբ, որի բողոքարկման կարգը նույնպես սահմանվում է օրենքով:

**10. Դիմող կողմը վիճարկում է նաև ՀՀ քրեակադարողական օրենսգրքի 115 հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությամբ ամրագրված այն դրույթը, որի համաձայն՝ հանձնաժողովի որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ այն դեպքերի, եթե որոշումները կայացվել են Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով սահմանված կարգի խախտմամբ:**

Վյու կապակցությամբ, հարկ է նախ անդրադառնալ հանձնաժողովների կարգավիճակին ու գործունեության բովանդակությանը:

Հանձնաժողովներն իրենց բնույթով անկախ են և ընդգրկում են ինչպես պետական կառույցների՝ համապատասխան գերադեսչությունների, այնպես էլ հասարակայնության ներկայացուցիչներ: Հանձնաժողովների նախագահների եւ անդամների լիազորությունների ժամկետը երեք դարի է: Հանձնաժողովի աշխադարձային որոշմամբ սպեղծվում են հանձնաժողովի առնվազն երկու անդամներից կազմված են-

թահանձնաժողովներ, որոնց անդամները պետք է փոխվեն ռոբացիոն կարգով, որպեսզի նույն անձը նույն քրեակարողական հիմնարկի հետ կապված հարցերի նախապարագմանը մասնակցի ոչ ավելի, քան երեք ամիս անընդմեջ:

Անկախ հանձնաժողովի գործունեության կարգը սահմանող՝ **«Նախագահի հրամանագիրը (31.07.2006թ. թիվ ՆԴ-163-Ն) կարող է բողոքարկման առարկա լինել՝ դրա թե՛ օրենքին եւ թե՛ Սահմանադրությանը համապարասխան լինելու գեսանկյունից: Այդ հանձնաժողովը որեւէ հարց չի կարող քննության առարկա դարձնել, եթե չկա պարփակ կարող հիմնարկի վարչական հանձնաժողովի որոշումը (այն սպեղծվում է **«քրեակարողական օրենսգրքի 114 հոդվածի 2-րդ մասի հիման վրա՝ «Նախավարության որոշմամբ): Վարչական հանձնաժողովի որոշումները դարպական կարգով կարող են բողոքարկվել՝ ըստ **«քրեակարողական օրենսգրքի 115 հոդվածի 4-րդ մասի: Փաստորեն, **«քրեակարողական օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ մասի հիման վրա սպեղծված անկախ հանձնաժողովը (այդ նորմի սահմանադրականությունը դիմող կողմը չի վիճարկել) իրականացնում է բացառապես վարչական հանձնաժողովի նկարմամբ վերահսկողական լիազորություն: Վերջինիս անհրաժեշտությունը պայմանավորվել է նաև իրավակիրառական պրակտիկայով, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման խնդրով, օրենքով նախափեսված պարժամշացների իրավական նշանակությունը չիմասպազրկելու անհրաժեշտությամբ, երբ պայմանական վաղաժամկետ ազարումը դառնում է ձեւական ու համապարած՝ առանց դրա իրավական նշանակության ու նպարակի հսկակ երաշխավորման: Իսկ վերջինս անմիջականորեն առնչվում է նաև հասարակության անվիանգության եւ այլոց իրավունքների ու ազարությունների հարգման ու պաշտպանության խնդրին:********

**Մարդու իրավունքների Եվրոպական դարպարանը 2006թ. ընդունած՝ **Լեգերն ընդդեմ Ֆրանսիայի վճռում, անդրադառնալով, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում առկա է պայմանական վաղաժամկետ ազարման երեք հիմնական մոդել, այն Է՝ հայեցողական համակարգ, պարսպադիր ազարման համակարգ եւ խառը համակարգ, նշում է, որ հայեցողական համակարգը կիրառելի է անդամ պետությունների մեծամասնությունում: Այս համակարգն ուղղակիորեն կապված է անհարականացման սկզբունքի հետ, քանի որ թույլ չի տալիս ավտոմատ ազարումը:****

**Նման համակարգի կիրառման դեպքում հիմնական խնդիրներից է, որ փարբեր մարմինների որոշումների հնարավոր անհամապարասխանության հարցը լուծում ունենա: Տվյալ հարցին առնչվող **«օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ հնարավոր անհամաշափելիության խնդիրը կարող է միայն դարպական կարգով իր****

լուծումն սրանալ, եթե նախապես օրենսդրության հսկակեցված են այս հարցում գարբեր մարմինների լիազորություններն ու հայեցողության շրջանակները:

Ինչ վերաբերում է հիշապակված գործին, ապա Եվրոպական դատարանը մերժել է դիմողի պահանջը՝ արդահայտելով այն իրավական դիրքորոշումը, որ «հասարակությանը հարմարվելու ջանքերի»՝ դիմողի կողմից մարմանշված չափանիշի կիրառումը ներպետական իշխանությունների կողմից ներպետական օրենսդրության դրույթների մեջնարանման իրավասության շրջանակներում է:

Սահմանադրական դատարանը գպնում է, որ **«Հրեակապարողական օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ մասի հիման վրա սրեղծված հանձնաժողովին առնչվող հարց քննելիս՝ դատական վերահսկողության խնդիրը ոչ թե այդ մարմնի՝ օրենսդրությամբ սահմանված բացառիկ գործառույթների կրկնօրինակումը պետք է լինի, այլ նրա որոշումների՝ օրենսդրությանը համապատասխանելը վերահսկելը»:** **«Հրեականադրության 6 հոդվածի իմպերաֆիվ պահանջն է, որ «Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը»:** Այլ իրավական ակդերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին»: Միայն դատարանը կարող է որոշել իրավական ակդը համապատասխանում է օրենքին, թե՝ ոչ: Սակայն դատարանը չի կարող իրացնել օրենքով անկախ հանձնաժողովին վերապահված լիազորությունը: Տվյալ պարագայում պետք է գործի **«Վարչական դատավարության օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ մասի օրենսդրական կարգավորման այն գրամաբանությունը, որ երբ անկախ հանձնաժողովն իրավասու է եղել գործել իր հայեցողությամբ, և դատարանը հանգում է այն հետեւությանը, որ հանձնաժողովի հայեցողական լիազորություններն իրականացվել են օրենսդրությանը ոչ համապատասխան, ապա դատարանի վճռի եզրափակիչ մասը պետք է սահմանի հանձնաժողովի պարապահանագությունը՝ իր որոշումն ընդունել կամ կարարել գործողություն՝ հիմք ունենալով դատարանի իրավական դիրքորոշումը եւ ապահովել կայացվող որոշման իրավաչափությունը՝ այն համապատասխանեցնելով օրենքի պահանջներին»:**

**«Հրեակապարողական օրենսգրքի վիճարկվող հոդվածում ամրագրված այն դրույթը, որը նախադրեսում է պարփիթը կրող հիմնարկի վարչակազմի որոշումները դատական կարգով բողոքարկելու հնարավորություն, իսկ անկախ հանձնաժողովի որոշումների դատական բողոքարկման հնարավորություն նախադրեսում է միայն այն դեպքերում, երբ այդ որոշումը կայացվել է **«Նախագահի հրամանագործ սահմանված կարգի խախտմամբ եւ բացառում է նաեւ այդ որոշման դատական կարգով բողոքարկումը, եթե այն հակասում է օրենքին, ոչ հետեւողական լուծում է եւ չի երաշխավորում միջազգայնորեն ընդունված եւ **«Սահմանադրության պահանջ-******

ներին համապատասխան՝ պարզից պայմանական վաղաժամկեր ազադման կարգի արմագավորում ՀՀ իրավական համակարգում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դադարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դադարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006 թվականի հունիսի 13-ին ընդունված՝ «ՀՀ քրեական դադարանության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կադարձելու մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. ՀՀ քրեական դադարանության օրենսգրքի 115 հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ մասերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. ՀՀ քրեական դադարանության օրենսգրքի 115 հոդվածի 4-րդ մասը՝ անկախ հանձնաժողովի որոշումն օրենքին հակասելու դեպքում դադարական կարգով բողոքարկելը սահմանափակելու մասով ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6, 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածներին հակասող եւ անվավեր:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

## **ՆԱԽԱԳԱՎԱՌՈՂ**

## **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

5 փետրվարի 2008 թվականի

ՍԴՈ-733